



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church  
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish

Սր Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Registered Charity No 1173403

t. +44 (0)20 7373 8133 Pastoral office email. [info@styeoghiche.org.uk](mailto:info@styeoghiche.org.uk)

[www.styeoghiche.org.uk](http://www.styeoghiche.org.uk) <https://www.facebook.com/StYeghiche>

SUNDAY BULLETIN

1: List of the Sunday Reading,

19th August 2018

Bulletin No 35/18

First Sunday after the Assumption of the Holy Mother of God

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ 2 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՍՏԱԿԷՆ 6 :16-7:1

Եւ ի՞նչ համաձայնութիւն ունի Աստուծոյ տաճարը կուռքերուն հետ, որովհետեւ դուք ապրող Աստուծոյ տաճարն էք՝ ինչպէս Աստուած ըսաւ. «Անոնց մէջ պիտի բնակիմ եւ անոնց մէջ պիտի շրջիմ. անոնց Աստուած պիտի ըլլամ ու անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան»:

Ուստի ելէ՛ք անոնց մէջէն եւ զատուեցէ՛ք,- կ'ըսէ Տէրը:- Անմաքուր բանի մի՛ դպչիք, ու ես պիտի ընդունիմ ձեզ. ես Հայր պիտի ըլլամ ձեզի, ու դուք՝ իմ որդիներս եւ աղջիկներս պիտի ըլլաք, - կ'ըսէ Ամենակալ Տէրը»:

Ուրեմն, սիրելիներ, այս խոստումները ունենալով՝ մաքրե՛նք մենք մեզ մարմինի ու հոգիի ամէն տեսակ պղծութենէ, եւ կատարելագործե՛նք սրբացումը Աստուծոյ վախով:



The Epistle of St Paul to the 2 Corinthians 6:16-7:1;

Paul Writes to Corinthians

What agreement has a temple of God with idols? For you are a temple of the living God. Even as God said, "I will dwell in them, and walk in them; and I will be their God, and they will be my people." Therefore "Come out from among them, and be separate," says the Lord. "Touch no unclean thing. I will receive you. I will be to you a Father. You will be to me sons and daughters," says the Lord Almighty."

Having therefore these promises, beloved, let us cleanse ourselves from all defilement of flesh and spirit, perfecting holiness in the fear of God.

Ի՞նչ է ծիսատյանը

Ծիսական գրականություն, եկեղեցում գործածվող՝ գործնական-արարողական կիրառություն ունեցող սրբազան մատյաններ: Ծեսի և դրա հետ կապված ծիսատյանի ձևավորումը կապված է Ընդհանրական եկեղեցու որպէս վարչական միավորի, կազմավորման հետ (I դ. վերջ): Ծիսատյանը (առհասարակ ծիսական գրականությունը) սկզբնավորվել է հին հրեական իրականությունում:

Իբրև այդպիսին Հին կտակարանում առկա են ծեսի (գլխավորաբար զոհաբերման և օծման) մի շարք նկարագրություններ (Ղևտ. 9.3-22, Ա Թագ. 16.13, Գ Թագ. 18.31-39 և այլն): Նոր կտակարանում (Մատթ. 3.11, Ղուկ. 3.21) ու Եպիփան Կիպրացու Ավետարանի մեկնության մեջ (Մատենադարան, ձեռ. դ 949, 4750) տրվում են Պատարագի և Սկրտության վաղագույն նկարագրություններ: Հայ եկեղեցու արարողակարգում առկա են Ավետարանը և Ժամագիրքը, Շարակնոց, Ճաշոց, Հայսմավուրք, Տոնացույց, Խորհրդատետր-Պատարագամատույց, Մաշտոց ծիսատյանները:

Առաջինները կիրառվում են Գիշերային, Առավոտյան, Արևագալի, Երեկոյան, Խաղաղական և Հանգստյան Ժամասացությունների Ժամանակ, իսկ Մաշտոցը անդաստանների զարնանացանն ու աշնանացանը, ջրօրհները, պսակադրությունները, ննջեցյալների թաղումը, մանկանց մկրտությունը կատարելիս: Հայ եկեղեցական մատենագրության մեջ ծեսի մասնակի նկարագրություններ տրվում են Ստեփանոս Սյունեցու, Խոսրով Անձևացու և Ներս Ես Լամբրոնացու Ժամակարգությանը և Պատարագին նվիրված աշխատություններում:

Աղբյուր՝ Ք.Հ. հանրագիտարան, հեղինակ՝ Եղիշէ ավ. քին. Սարգսյան, Հակոբ Քյոսեյան



## 2: A short interpretation of the Gospel reading under the title The hard sayings'

### ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԷՏԱՐԱՆԵՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 1 :39-56

Այդ օրերը Մարիամ կանգնեցաւ, փութալով գնաց լեռնակողմը՝ Յուդայի մէկ քաղաքը, մտաւ Ջաքարիայի տունը եւ բարեկեց Եղիսաբէթը: Երբ Եղիսաբէթ լսեց Մարիամի բարեւը, երախան խայտաց անոր որովայնին մէջ. իսկ Եղիսաբէթ լեցունեցաւ Սուրբ Հոգիով, ու բարձրաձայն գոչելով ըսաւ. «Դուն օրհնեալ ես կիներուն մէջ, եւ օրհնեալ է որովայնիդ պտուղը: Այս ինչպէս եղաւ, որ իմ Տէրոջս մայրը եկաւ ինծի. որովհետեւ ահա՛ երբ քու բարեւիդ ձայնը հասաւ ականջիս, երախան ցնծութենէն խայտաց որովայնիս մէջ: Երանի՛ անոր՝ որ հաւատացած է, որովհետեւ՝ պիտի կատարուին այն բաները՝ որոնք Տէրոջմէն ըսուեցան իրեն»:

Մարիամ ըսաւ. «Իմ անձս կը մեծարէ Տէրը, եւ իմ հոգիս ցնծաց իմ Փրկիչ Աստուծոմովս, քանի որ նայեցաւ իր աղախինին նուաստութեան. արդարեւ ահա՛ ասկէ ետք՝ բոլոր սերունդները երանելի պիտի կոչեն զիս, որովհետեւ Հօգորը մեծամեծ բաներ ըրաւ ինծի: Անոր անունը սուրբ է, եւ անոր ողորմութիւնը իրմէ վախճողներուն վրայ է՝ սերունդէ սերունդ:

Իր բազուկով զօրութիւն ցոյց տուաւ, ցրուեց ամբարտաւանները իրենց սիրտին երեսկայութեամբ:

Չօրաւորները իջեցուց իրենց գահերէն, ու բարձրացուց նուաստները:

Անօթիները լիացուց բարիքներով, եւ պարապ ճամբեց հարուստները:

Օգնութեան հասաւ իր Իսրայէլ ծառային, յիշելով իր ողորմութիւնը ինչպէս ինք խոստացած էր մեր հայրերուն - Աբրահամի եւ անոր զարմին հանդէպ՝ յաւիտեան»:

### The Holy Gospel of Jesus Christ according to Luke 1:39-56

#### Mary Visits Elizabeth

Now at this time Mary arose and went in a hurry to the hill country, to a city of Judah, and entered the house of Zacharias and greeted Elizabeth. When Elizabeth heard Mary's greeting, the baby leaped in her womb; and Elizabeth was filled with the Holy Spirit. And she cried out with a loud voice and said, "Blessed *are* you among women, and blessed *is* the fruit of your womb! "And how has it *happened* to me, that the mother of my Lord would come to me? "For behold, when the sound of your greeting reached my ears, the baby leaped in my womb for joy. "And blessed *is* she who believed that there would be a fulfillment of what had been spoken to her by the Lord."

#### The Magnificat

And Mary said: "My soul exalts the Lord,  
And my spirit has rejoiced in God my Savior.

"For He has had regard for the humble state of His bond slave; For behold, from this time on all generations will count me blessed.

"For the Mighty One has done great things for me; And holy is His name.

"AND HIS MERCY IS UPON GENERATION AFTER GENERATION TOWARD THOSE WHO FEAR HIM.

"He has done mighty deeds with His arm; He has scattered *those who were* proud in the thoughts of their heart.

"He has brought down rulers from *their* thrones, And has exalted those who were humble.

"HE HAS FILLED THE HUNGRY WITH GOOD THINGS; And sent away the rich empty-handed.

"He has given help to Israel His servant, In remembrance of His mercy, As He spoke to our fathers, To Abraham and his descendants forever."

And Mary stayed with her about three months, and *then* returned to her home.

### ՏՕՆ ՍՈՒՐԲ ԽԱՉՎԵՐԱՑ

Կիրակի, Սեպտեմբեր 16, 2018

Անոնք որոնք կը փափաքին Ս Խաչվերացի տօնին առթիւ իրենց սրտագին նուիրատուութիւնները ընել, թող հաճին մոտենալ Օուիսի Հոգաբարցութեան կամ հեռաձայնել եկեղեցւոյ գրասենեակը 020 7373 8133. *Ձեր ուխտը ընդունելի ըլլայ:*

### Exaltation of the Holy Cross

Sunday 16th September 2018

All those wishing to make monetary donations, please contact the Parish Council members at church or call parish office 020 7373 8133 .

Thanking you in advance ,

St Yeghiche Armenian Church Parish Council

### 3: List of the Feasts celebrated in the Armenian church

#### Մբ. Հովակիմի և Աննայի՝ Մբ. Աստվածածնի ծնողների և Յուղաբեր կանանց հիշատակության օր

Սուրբ Հովակիմի և Աննայի անուններն անմիջապես կապվում են Հիսուսի հետ՝ լինելով Աստվածամոր ծնողները:

Ըստ ավանդության՝ բարեպաշտ և մեծահարուստ Հովակիմը Դավթի ցեղից էր՝ թագավորական տնից, իսկ Աննան՝ քահանայական տնից: Մի օր, տաճարում ընծա մատուցելիս, քահանան Հովակիմին պատվիրում է վերջում կանգնել, քանի որ նա անգավակ էր: Սրանից վշտացած՝ Հովակիմը դուրս է գալիս և անմիջապես լեռը բարձրանում՝ երդվելով չիջնել այնտեղից, մինչև Աստծո այցելությունը: Նրա օրինակով Աննան էլ տանն աղոթում և ապաշխարելու է նվիրվում: Եվ մի օր, երբ Աննան պարտեզում տեսնում է իրենց ձագերի հետ խաղացող թռչուններին, տխրում և լաց է լինում, քանզի ինքը զրկված էր մայրանալու շնորհից: Այդ պահին հայտնվում է Աստծու հրեշտակը և ավետում, որ զավակ է ունենալու, ում երանի են տալու բոլոր ազգերը: Նույն տեսիլքը երևում է նաև Հովակիմին, որն ուրախությունից սկսում է ողորմություն բաժանել աղքատներին: Աննան հղիանում է և ծնված հրեշտականման մանկանն անվանում են Մարիամ, որ նշանակում է լուսավորյալ:

Յուղաբեր կանայք Հիսուսի չարչարանքների, թաղման և խաչելության ականատեսներն են: Նրանք Տիրոջ Հարության առաջին ավետաբերներն են: Յուղաբեր կանայք Քրիստոսին հետևեցին Իր ողջ երկրային առաքելության իրագործման ընթացքում: Եկեղեցու կողմից նրանք կոչվում են <<Յուղաբեր>>, որովհետև Միաշաբթի (Կիրակի) առավոտ գերեզման շտապ գնացին՝ Հիսուսի մարմինն իրենց պատրաստած անուշահոտ յուղերով օծելու:

Իրենց անձնվիրության շնորհիվ նրանք առաջինը տեսան Հարուցյալ Փրկչին և այդ մասին հայտնեցին առաքյալներին: Նրանք նաև խմբովին ներկա էին Վերնատանը՝ Հոգեգալստին և առաքյալների հետ ստացան Սուրբ Հոգու շնորհները:

#### Commemoration of Sts. Joachim and Anna, Parents of the Holy Mother of God, and Oil-Bringing Women

The names of St. Joachim (Jehoiakim) and Anna are closely related to Jesus, as they are the parents of the Holy Mother of God.

According to the tradition, wealthy Joachim was a descendant of King David, and Anna was the daughter of a priest. One day, when performing a service in the cathedral, the priest tells Joachim to stand in the end, as he had no son. Becoming upset, Joachim comes out of the Cathedral and immediately climbs up the mountains, vowing not to descend the mountain until the visit of God. Following his example, Anna, staying at home, devotes herself to prayer and repentance. And once, when Anna sees in the garden the birds playing with their nestlings, becomes sad and cries, as she wasn't granted the grace of being a mother. Just at that moment the Angel of God visits Anna, telling her that God will be granting her a son who will be the mother of the Savior of the world. Joachim also has the same vision and becoming very happy, gives alms to the poor. The parents decide to devote the baby to the Church. The baby is named Mary, which means "Illuminated".

The oil-bringing women are the witnesses of Christ's torments. They are the first to give the good tidings of the Resurrection of our Lord. The Oil-Bringing women followed Christ during all the time of realizing His earthly mission. The church calls them "Oil-Bringing Women" as on Sunday, in the morning, they hurried to the tomb to anoint the body of Jesus by the aromatic oils prepared by themselves.

Thanks to their devoutness they were first to see the Risen God and told about it the Apostles. They were in the upstairs during Pentecost and together with the Apostles received the graces of the Holy Spirit.

The Armenian Apostolic Church commemorates the memory of St. Joachim and Anna together with the oil-Bringing Women.

#### 4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Mr & Mrs Setrag and Jacqueline Karanfilian and family for the souls of their Parents / Grandparents the late **KHOREN & OVSANNA KARANFILIAN** (Խորեն & Ովսաննա Գարանֆիլեան), and for the soul of their Brother / Uncle the late **Dr HRANT KARANFILIAN** (Տորթ Զրանդ Գարանֆիլեան), and for all the old and new deceased members of the **KARANFILIAN** and **STANBOULIAN** families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

***Welcome:** We wish to welcome those who are visiting our church. The Parish Council would like to invite you to make St. Yeghiche Armenian Church your spiritual home. You are cordially invited to take part in the Service and activities of our Church.*

**Rev Fr Nshan Alaverdyan** is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրինի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանին 07548 777 147:

#### ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk) Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

#### Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to [info@styeghiche.org.uk](mailto:info@styeghiche.org.uk) by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated.

**Please remember our Church in your prayers. St**

*Your kind donations are gratefully accepted:*

#### ANNOUNCEMENT:

In order to meet the ever increasing church functioning expenses, The St Yeghiche Parish Council would like to appeal to all members of the community for their annual membership dues and generous donations. Please complete this form and hand your donation to the members of the Parish Council at the side entrance of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish c/o Dr. Setrag Karanfilian, 13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB. Please make your cheques payable to: "St Yeghiche Armenian Church".

Alternatively you can arrange a standing order or donation by bank transfer to our St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at:

HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

I wish to arrange a standing order/make a donation £ .....to St Yeghiche Armenian Church Parish.

Name: .....

Address: .....

Tel:.....Email:.....

**St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms available from Parish Council.**